ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՋՐԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИИ АРМАВИРСКИЙ МАРЗ
МУНИЦИПАЛИТЕТ с. ДЖРАШЕН

0942. ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
Գ. ՋՐԱՇԵՆ
հեռ. 098 037 111
098 980 506

«07» հուլիսի 2017թ. թիվ 52

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Ձեզ ենք տեղեկացնում Արմավիրի մարզի Ջրաշեն համայնքի ղեկավարի կողմից 2017 թվականի հունիս ամսվա ընթացքում կարգադրություններ չեն արձակվել կից ներկայացնում ենք ընդունված որոշումները:

Առդիր՝ 3 էջ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Խ. ԴԱՎԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՋՐԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ 04402688 Գ.Ս

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԱՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 112.36/10084-17
«12» 07 2017 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՇԵՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

06.07.2017թ. թիվ 15

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԱՌՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ ԿԱԶՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՈՐՈՇՈՒՄ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ մասի, 1-ին կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին» N 656 որոշմամբ

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Իրականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրաշեն համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի ընթացիկ հաշվառումը ու կազմել համայնքի հողային հաշվեկշիռը:

2.Այն համաձայնեցնել համայնքի ավագանու և Հայաստանի Հանրապետության կառավարությանը առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանման հետ:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Խ.ԴԱՎԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՇԵՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

14.06.2017թ. թիվ 12

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ ՏԵՂԱԿԱՅԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՈՐՈՇՈՒՄ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասով, հիմք ընդունելով համայնքի բնակիչներից պարբերաբար ստացվող դիմումները ճանապարհային նշանների տեղակայման մասին ինչպես նաև բացառելու համար տրանսպորտային միջոցների շահագործումից առաջացող դժբախտ դեպքերը:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Համայնքի տարածքում տեղակայել ճանապարհային երթևեկության նշաններ:

2. Ճանապարհային երթևեկության նշանների ձեռք բերման աջակցության համար դիմել ճանապարհային ոստիկանության Արմավիրի բաժին:

3 .Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Խ.ԴԱՎԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 հունիսի 2017 թվականի N 14

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԵՐՆ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի N 1066-ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի 7-րդ և 9-րդ կետերով, հիմք ընդունելով համայնքի մի խումբ բնակիչների դիմումները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Ջրաշեն համայնքում ցածրարժեք հողատեսքերը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքերի՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումը սահմանված կարգով հինգ օրվա ընթացքում ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությունն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի տարածքային ստորաբաժանում:
3.Սույն որոշմամբ իրականացված հողատեսքերի փոփոխումն սահմանված կարգով արտացոլել յուրաքանչյուր տարվա համար կազմվող համայնքի հողային հաշվեկշռում:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Խ.Դավթյան